
**ՀԱՄԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՂՆՈՎԻԹՅԱՆ ԷԼԵՎԻԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ՍԱՀԱԿՅԱՆ Լ. Ս.

Հայոց Համշենի նշանավոր գյուղերից էր Եղնովիտը, որն իր Խաչեքարի մեծ վանքով հայտնի էր որպես հայ գրչության կարևոր կենտրոն: Եղնովիտ գյուղը ընդհուպ մինչև XIX դ. վերջը պահպանել է իր ազգային դիմագիծը՝ ամենից երկար դիմադրելով օսմանյան կայսրության իսլամացման քաղաքականությանը:

Եղնովիտ/Էլեվիթ (այժմ՝ Յայլաքյոյ) գյուղը¹ ներկայիս Թուրքիայի Ռիզեի նահանգի Չամլըհեմշին (նախկինում՝ Վիչեալթը, թարգմանաբար՝ Վիժեի տակ, Ստորին Վիժե) գավառի կազմում է: Այն Չամլըհեմշինի կենտրոնից գտնվում է 34.5 կմ, իսկ Չաթից ընդամենը 7-8 կմ հեռավորության վրա: Ծովի մակերևույթից ունի 1800 մ բարձրություն²:

Եղնովիտ/Էլեվիթ գյուղը, որ ծվարած է Խաչիվանքի [տեղանունը կազմվել է խաչ+ի (սեռ. հոլ)+վանք, հայկական աղբյուրներում հիշվում է՝ Խաչիվանք] և Թիրովիթի կամ Թըրովիթի (կարծում ենք՝ տեղանվան մեջ Տէր+հովիտ բաղադրիչներն են՝ տէր>տիր>թիր>թըր հրնչյունափոխությամբ) արոտավայրերի խաչմերուկում, շրջապատված է Ջագուր/Ջագաթ (Ճակատ), Թավթենի (թավ՝ խիտ անտառ բնորոշմամբ+ուտ+ենի) և Սեր (Մար) կոչվող՝ դարավոր, ստվարախիտ անտառով ծածկված բարձր սարերով: Հենց այս սարի ստորոտում էլ գտնվում է Եղնովիտի Թավթենի անվանվող թաղը:

Եղնովիտը՝ նախկին հայկական գյուղը, այժմ դարձել է ամառանոցային կենտրոն, որտեղ մայիսից մինչև հոկտեմբերի վերջը համշենցիները գալիս են հանգստանալու, նաև՝ Վարդավառը նշելու, որն այսօր նրանց համար վերածվել է յուրահատուկ ազգագրական երգ ու պարի տոնակատարության: Իսկ ձմռանն այստեղ, առատ տեղումների պատճառով, գրեթե մարդ չի մնում: Շրջանում միայն Էլեվիթն է, որն ունի գյուղապետարան, և ներկայիս անունն էլ թուրքական պաշտոնական արձանագրություններում Յայլաքյոյ (Yaylaköy) է, որ նշանակում է արոտավայր-գյուղ: Չնայած պաշտոնապես փոխվել է բնակավայրի անունը, սակայն շրջանառության մեջ շարունակում է մնալ տեղանվան հին՝ տեղական-բարբառային Էլեվիթ տարբերակը:

¹ 2011 թ. ամռանը բարբառագիտական և ժողովրդագրական հետազոտություններ կատարելու նպատակով դաշտային աշխատանքներ ենք իրականացրել ներկայիս Թուրքիայի Ռիզեի նահանգի Չամլըհեմշին և Չայելի (ինում՝ Մափավրի) գավառների՝ համշենցիների բնակավայրերում: Այս այցելության ընթացքում ժողովրդագրական, տեղանվանական և տեղագրական նոր, կարևոր փաստեր ենք գրառել նաև Համշեն գավառի Եղնովիտ/Էլեվիթ գյուղում:

² Այդ մասին տե՛ս նաև Biryol U. Kaçkarlar'da Bulut Olsam, Ankara, 2011, s. 42.

Հայկական աղբյուրների վկայությամբ՝ Եղնովիտը դեռևս XV- XVI դդ. հայտնի էր որպես հայ հոգևոր մշակույթի, հայ գրչության կարևոր օջախներից մեկը: Մեզ են հասել գրիչ Կարապետի՝ 1499-1528 թթ. այստեղ ընդօրինակած «Բժշկարանի», «Տոնացույց-Ավետարանացույցի», տարբեր նյութերի մի ժողովածուի, Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» պոեմը, երկու Մաշտոցի, երեք շարակնոցի, ինչպես նաև՝ գրիչ Հովհաննես Մալազի/Մաղազի՝ 1517 թ. ընդօրինակած «Բժշկարանի» և 1523 թ.՝ Ավետարանի ձեռագրերը, որոնց մեջ հստակ նշված են դրանց ստեղծման տեղն ու թիվը, գրիչների անունները: Համշենում կազմված ձեռագրերը հանգամանորեն քննել և մեկնաբանել են Մխիթարյան միաբան Հ. Տաշյանը³ և ակադեմիկոս Լ. Խաչիկյանը⁴: Եղնովիտ գյուղի մոտ գտնվող Խաչեքարի (կամ Խաչիկ հոր) վանքում գրիչ Կարապետի 1504 թ. ընդօրինակած ձեռագրից Հ. Տաշյանի բերած հատվածում կարդում ենք. «Արդ գրեցաւ սա ի յերկիրս Համշինու, ի գիւղս Եղնովտա, ի յանապատս Սբ. Խաչիկ հաւրն հոգեւորի»⁵: Համաձայն Լ. Խաչիկյանի՝ Խաչեքարի-Խաչիկ հոր վանքը «Համշենի վանական հաստատություններից ամենանշանավորն էր, բայց ոչ միակը: XV դարի կեսերին Համշենում եղել է 2 այլ վանք ևս՝ Քոշտենց և Խուժկա վանքերը...», որտեղ նույնպես հայ գրիչներն ընդօրինակել են բազմաթիվ ձեռագրեր⁶: Ինչպես գրում է Լ. Խաչիկյանը, «Չպետք է տարակուսել, որ Համշենում ստեղծվել են տասնյակ ու հարյուրավոր այլ ձեռագրեր ու մշակութային արժեքներ, որոնք, սակայն, վերջին հարյուրամյակների ընթացքում ոչնչացվել են բարբարոս տիրապետողների կողմից, կամ դեռ հայտնի չեն գիտական աշխարհին»⁷:

Հ. Տաշյանը կարծում է, որ Եղնովիտի վանքի Խաչիկ հոր անունը ծագել է Քաջքար լեռան անունից՝ Քաջքար>Խաչքար>Խաչիկ հոր փոփոխությամբ⁸: Իսկ Քաջքարը, ավելի հավանական է, որ քաջք (դներ, ոգի, փերի)⁹ և քար բաղադրիչներից է կազմվել (ի դեպ, տեղանվան այսպիսի մեկնաբանությունը մեզ հուշել է համշենագետ Սերգեյ Վարդանյանը): Մեր կարծիքով, տեղանունը որևէ կապ չունի Լ. Խաչիկյանի առաջադրած կովկասյան Կաշգարիի հետ¹⁰: Հայ մատենագրության մեջ Համշենն իր

³ Տաշեան Թ., Տայք, դրացիք եւ Խոտորջուր, պատմական-տեղագրական ուսումնասիրություն, հ. Բ, Վիեննա, 1980, էջ 64-73: Այդ մասին տե՛ս նաև Խաչիկյան Լ., Էջեր համշինահայ պատմությունից (Բանբեր Երևանի համալսարանի, 1969, N 2, էջ 133):

⁴ Խաչիկյան Լ., նշվ. աշխ., էջ 133:

⁵ Տաշեան Թ., նշվ. աշխ., էջ 64-73:

⁶ 1422 թ. Քոշտենց վանքում ընդօրինակված N 1617 ձեռագիրը գտնվում է Երուսաղեմի Հայոց պատրիարքության գրատանը, 1460 թ. Խուժկա վանքում ընդօրինակված N 7263 ձեռագիր հիշատակարանը՝ Մաշտոցի անվան Մատենադարանում (այդ մասին մանրամասն տե՛ս Խաչիկյան Լ., նշվ. աշխ., էջ 126-128):

⁷ Նույն տեղում:

⁸ Տաշեան Թ., նշվ. աշխ., էջ 68:

⁹ Հայերենում քաջ նշանակում է նաև ազնիվ, առաքինի, արի, կտրիճ, դյուցազն, հսկա, ավելի մեծ, շատ մեծ (Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 4, Ե., 1979, էջ 554):

¹⁰ Խաչիկյան Լ., նշվ. աշխ., էջ 132:

անանցանելի, մշուշապատ անտառների պատճառով կոչվել է նաև «անլույս աշխարհ», իսկ Քաջքարը՝ «Քաջքարու դև»¹¹: Քաջք արմատից հայերենն ունի քաջքոտ, քաջքոտիլ, քաջքաքամի, քաջքաձայն, քաջքաձոր, քաջքատուն, քաջքաքար¹² բառերը: Այսօր էլ տեղացիները հստակորեն պահպանել են լեռնաշղթայի Քաջքար անվանումը՝ տեղական խոսվածքին բնորոշ բառամիջի ջ>չ հնչյունափոխությամբ: Բացի այդ՝ պետք չէ պատահական համարել այն հանգամանքը, որ համշենցիների բանահյուսության մեջ տարածված են ոգիների և փերիների հետ կապված բազմաթիվ պատմություններ:

Եղնովիտի բնակավայրն ու վանքը հայտնի են նաև պատմական այլ արժեքավոր տեղեկությամբ. V դարում՝ Վարդանանց պատերազմի վերջին, պատմական Խաղտիք գավառի այս տարածքում՝ Քաջքար լեռան ստորոտում տեղի ունեցած մարտերի ժամանակ զոհված հայ ռազմիկների և նրանց զորավար Վարդան Մամիկոնյանի եղբայր Հմայակ Մամիկոնյանի նշխարները¹³, ինչպես հաստատում են Համշենում գրված ձեռագրերը, պահվել են Եղնովիտի Խաչեքարի վանքում: 1504 թ. գրիչ Կարապետ երեցն իր ընդօրինակած ձեռագրում հիշատակում է, որ «Համշինու երկրի» Եղնովիտ գյուղի Խաչիկ հոր անապատում են պահվել Վարդանանց նշխարները. «ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի եւ Սուրբ Միովնի և նշխարաց Սրբոց Վարդանանց, որ աստ կան հաւաքեալ ի պահպանութիւն երկրին մերոյ»¹⁴: Մեծանուն գիտնական Ղ. Ալիշանն այս առիթով գրում է. «Գլխաւոր աւանն Համշեն որ և Պաշ-Համշեն կայ ի ստորոտս Տէմիրտաղ լերին. առ որով և Խաչեքար լեառն, յորում մենաստան հին, ուր պահէին նշխարք Վարդանանց»¹⁵:

Յավոք, Եղնովիտի մասին տեղեկությունները կցկտուր են, բայց դատելով վերոբերյալ փաստերից, անկասկած, Եղնովիտի վանական այս անապատը եղել է հանրահայտ ուխտատեղի առնվազն մինչև XVIII դ.՝ Համշենի հայ բնակչության բռնի իսլամացումը և, ինչպես ստորև կտեսնենք, անգամ դրանից հետո՝ ընդհուպ մինչև XX դարը: Մինաս վարդապետ Բժշկյանը վկայում է, որ «Խաչիկքար վանքը մեծ ուխտատեղի է Հայոց եւ այլազգեաց: Այս վանքին քով գտան մեծ զանգագ մի. ուր կայ մեծ գերեզման ... հայ և տաճիկ վրան ուխտ կերթան մինչև հիմա»¹⁶: «Մինչև հիմա» ասելով՝ Բժշկյանը նկատի ունի XIX դ. սկիզբը: Իսկ նրա հիշատակած տաճիկներն իսլամացած/թուրքացած համշենցիներն էին: Այդ է հաստատում փոքր-ինչ

¹¹ Տաշեան Յ., նշվ. աշխ., էջ 101:

¹² ՀԱԲ, հ. 4, էջ 555:

¹³ Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Ե., 1989: Զամյանց Մ., Հայոց պատմություն, հ. Բ, Ե., 1984, էջ 79:

¹⁴ Տաշեան Յ., նշվ. աշխ., էջ 67-68:

¹⁵ Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Ս. Ղազար, 1855, էջ 39:

¹⁶ Մինաս Վարդապետ Բժշկեան, Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեաւ ծով, Վենետիկ, 1819, էջ 97:

վաղ գրված՝ Ղ. Բնճիճյանի հետևյալ հիշատակությունը, որ թեև XVII-XVIII դդ. Համշենի «ամբողջ շրջակայ գիւղորէիք դարձան ի տաճկության, սակս բռնութեան հարկապահանջութեան, բայց գտանին տակաւին ի նոսա և քրիստոնէայք, յորոց գիւղորէս կանգուն կան տակաւին եկեղեցի իւրեանց ի վաղուց մնացեալ, չունին երէց ի հովուել, միայն քանի մի անգամ յամին գայ առ նոսա երէց Յովողիւտ գեղջէ: Իսկ տաճիկք խօսին մինչև ցայժմ հայերէն,... պահէն պահս և գայլ ծէսս և օրէնս քրիստոնէական հաւատոց, յաճախեն յեկեղեցիս ևն...»¹⁷:

Էլելվիթ գետից այն կողմ՝ Ջագութ (Ճակատ) լեռան ուղղությամբ, բարձրադիր բլրի վրա գտնվում են վանքի փլատակները: Վանքից մնացել են միայն հիմքը, այս ու այն կողմ ցաքուցիք ընկած տաշված քարեր և խոտով ծածկված աղբյուրի գուռը, ինչպես համշենցիներն են ասում՝ ավզոնը (ավազան): Կային նաև տեղ-տեղ փորված փոսեր: Տեղացիները պատմում էին, որ ոսկի փնտրելու նպատակով տարբեր վայրերից մարդիկ են եկել և ավերել վանքն ու շուրջըրդը: Հիմքի մնացորդների ծավալից երևում է, որ Խաչիկ հոր վանքը բավականին մեծ շինություն է եղել: Պատահական չէր նաև վանքի համար ընտրված բարձրադիր տեղանքը, որտեղից նախկինում այս շինությունն իր ամբողջ շուրջով իշխող դիրք է ունեցել զրեթե ողջ Չամլըհեմշինի հովտի նկատմամբ: Օ. Օզթուրքի կազմած «Սևծովյան հանրագիտարանային բառարանի» համաձայն՝ Եղֆովիտի վանքը բնակիչները կոչել են նաև Սուհուփ Մինասս քիլիսեսի (Suhup Minas Kilisesi)՝ Սուրբ Մինասի եկեղեցի¹⁸: Թե որտեղից է առաջացել վանքի այս անվանումը, առայժմ չենք կարող ասել: Այդ հարցը լրացուցիչ հետազոտության կարիք ունի: Նույն հանրագիտարանում նշվում է, որ Եղնովիտը ժամանակին հայտնի է եղել նաև դարբնոցներով, որտեղ մշակել են Համշենի Դեմիրդաղ (թրք. թարգմանաբար՝ երկաթի լեռ) կոչվող լեռան երկաթե հանքերից բերված հումքը¹⁹:

Ժողովրդագրական տեղեկություններ: Հայկական աղբյուրները վկայում են, որ Եղնովիտ գյուղի բնակիչները ամենաերկարն են դիմադրել օսմանյան կայսրության իսլամացման քաղաքականությանը: Ղ. Բնճիճյանի հաղորդմամբ՝ «Եվողիւտ կամ Եղիովիտ: Գիւղ ի գլուխ վիճակին Համշինի, որոյ բնակիչք յառաջագոյն առհասարակ էին յազգէս հայոց, այլ այժմ կիսոյն դարձան ի տաճկութիւն...»²⁰: Հ. Տաշյանն էլ, հենվելով Ղ. Բնճիճյանի այս հաղորդման վրա, գրում է, որ 1806 թ. գյուղի բնակչության կեսն ընդունում է իսլամ²¹: Պ. Թումայանցը վկայում է, որ համշեն-

¹⁷ Բնճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենէտիկ, 1806, էջ 396:

¹⁸ Öztürk Ö. Karadeniz Ansiklopedik Sözlük, İstanbul, 2005, c. 1, s. 350-351.

¹⁹ Նույն տեղում, էջ 351:

²⁰ Բնճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 397:

²¹ Տաշեան Յ., Հայ բնակչությունը Սև ծովեն մինչև Գարին, Վիեննա, 1921, էջ 31: Այդ մասին տե՛ս նաև Խաչիկյան Լ., նշվ. աշխ., էջ 138:

ցիները «քրիստոնեության ամեն նշան կորսուցած են, և այդ մեծ զավառում միայն նշանավոր Եղնովիտ (Էլեհովիտ) գյուղում է մնացել քրիստոնեությունը պահպանած քսան ընտանիք»²²: Պ. Թումայանցի այս տեղեկությունները վերաբերում են XIX դ. երկրորդ կեսին:

Եղնովիտ բնակավայրի մասին որոշ կցկտուր տեղեկություններ են հաղորդում նաև օսմանյան և թուրքական աղբյուրները: 1831 թ. օսմանյան կայսրությունում տղամարդկանց հաշվառելու համար անցկացվել է մարդահամար: Քրիստոնյաներն ու մահմեդականները գրանցվել են առանձին դավթարներում (մատյաններում)²³: Օսմանյան արխիվում պահվում են նաև Համշենի կազային պատկանող մարդահամարի մատյանները, որոնք ունեն հետևյալ թվագրությունն ու փաստական ընդգրկումները. 1252 (1836)թ. Համշենի կազայի ռայա բնակչության մարդահամարի մատյան, 1254 (1838)թ. Համշենի կազայի իսլամ բնակչության մարդահամարի մատյան, 1258 (1842)թ. Համշենի կազայի իսլամական մատյան, 1258 (1842)թ. Ռիզեի կազայի իսլամական մատյան և ռայայի, Համշենի կազայի ռայա բնակչության մատյան, 1265 (1848)թ. Համշենի կազայի ոչ իսլամ հպատակների մատյան²⁴:

1848 թ. մատյանի համաձայն՝ Էլեվիթում գրանցվել են 10 տուն, 39 տղամարդ բնակիչ, որոնցից 9-ը առևտրի նպատակով տեղափոխվել են Ունիե, Տրապիզոն, Ղրիմ, Էրզրում, Քութայիս:

1876 թ. Տրապիզոնի վիլայեթի օսմանյան տարեգրքերում (salname) Եղնովիտը գրանցվել է Էլեվիթ քարյեսի (Elevid karyesi)՝ Էլեվիդի գյուղ տարբերակով, այսինքն՝ դեռ այդ ժամանակ ունեցել է գյուղի կարգավիճակ: 1876 թ. դրությամբ այնտեղ արձանագրվել են 17 տուն, 21 մահմեդական շունչ²⁵: 1877 թ. տարեգրքում Էլեվիթում գրանցվել են 11 տուն, 31 մահմեդական շունչ²⁶: Մեկ տարվա տարբերությամբ գրանցված տարեգրքերի այս տվյալները հակասական են և կասկածելի: Այդուհանդերձ, եթե 21 շունչը բաժանենք 17 տան վրա, ապա յուրաքանչյուր տուն ունեցել է 1,5 տղամարդ բնակիչ: Իսկ 31 շունչը 11 տան վրա բաժանելիս յուրաքանչյուր տանը ընկնում 2,5 տղամարդ: Եթե հաշվի առնենք, որ Եղնովիտի բնակչությունը նախկինում քրիստոնյա հայեր էին, ապա հայ ավանդական ընտանիքի միջին թիվը (ընտանիքի բոլոր անդամները միասին), ինչպես ցույց են տալիս հայկական և օտար բազմաթիվ աղբյուրները, առնվազն պետք է հաշվել տասուկ²⁷: Իսկ այդ դեպքում

²² Թումայանց Պ., Պոնտոսի հայերը, աշխարհագրական և քաղաքական վիճակ Տրապիզոնի, (Լուսնայ, Տիֆլիս, գիրք F (յուլիս), 1899, էջ 156):

²³ Güvenlioğlu İ. G., Hıçılmaz M. U., Gürdal M. Rize Hemşin İlçesi, Tarihi mezar Kitabeleri, İstanbul, s. 52.

²⁴ Նույն տեղում:

²⁵ Trabzon Vilayeti Salnamesi, Hazırlayan: Kudret Emiroğlu, Ankara, 1993, c. 8, s. 375-377.

²⁶ Trabzon Vilayeti Salnamesi, Hazırlayan: Kudret Emiroğlu, Ankara, 1995, c. 9, s. 317.

²⁷ Այդ մասին մանրամասն տե՛ս Սահակյան Լ., Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան զավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Ե., 2007, էջ 61-63: Տե՛ս նաև Նույնի՝ Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման

միայն 17 տան դիմաց կարող ենք հաշվել 170 շունչ: Բայամ ընդունելուց հետո էլ բազմազավակության ավանդույթը պահպանվել է համշենցիների ընտանիքներում²⁸: Մեր կարծիքով՝ նաև բնակավայրի բազմամարդությունն է եղել պատճառներից մեկը, որ Եղնովիտը կարողացել է երկար ժամանակ պահպանել իր ազգային դիմագիծը:

Պատահական չէ նաև, որ նույն՝ օսմանյան տարեգրքում որևէ խոսք չկա այդ շրջանում Էլեվիթում քրիստոնյա հայ բնակչության մասին: Եթե 1806 թ. միայն գյուղի կեսն էր ընդունել մահմեդականություն, և Պ. Թումայանցի համաձայն՝ դեռևս XIX դ. երկրորդ կեսին 20 ընտանիք մնացել էր քրիստոնյա, ապա կարելի է ենթադրել, որ այդ ժամանակ մոտավորապես 20 ընտանիք էլ, այսինքն՝ գյուղի կեսը, բռնի կրոնափոխված համշենցիներ պետք է լինեին: Բսկ օսմանյան տարեգրքում Էլեվիթի դիմաց նշված են միայն իսլամական տները, այն էլ՝ բնակիչների կասկածելի թվով:

Ավելին՝ ըստ «Մեծովյան հանրագիտարանային բառարանի», XX դ. սկզբում Էլեվիթում ապրել են «փոքր թվով» հայեր: Այս առիթով հեղինակը մի հետաքրքիր պատմություն է բերում. ծեր մոր հետ բնակվող Պետրոս անունով երեսուն տարեկան մի հայ (ի դեպ՝ այնտեղ ապրողներին դուր չի եկել, երբ իրենց էրմենի են ասել, իրենք իրենց հայ են անվանել) Քոլունա գյուղից կնության է վերցնում մի մահմեդական համշենցու: Պետրոսը կրոնափոխ է լինում: Մայրը շատ ծանր է տանում որդու կրոնափոխությունը: Մի օր մարդիկ այդ կնոջը՝ Թալինին, տեսնում են ջրաղացի մոտ արտասվելիս և հարցնում լաց լինելու պատճառը: Բսկ նա պատասխանում է. «Ինչպե՞ս լաց չլինեմ, քա՛հ²⁹, որդիս Հիսուսից երես է թեքել, հիմա էլ եթե Մուհամեդին նեղացնի, կգրկվի հանդերձյալ կյանքից»³⁰: Կարծում ենք՝ այդ կինն իր խոսքի երկրորդ մասն ասել է ճարահատյալ՝ վախենալով իսլամական միջավայրի ճնշումներից:

Այսօր Եղնովիտ/Էլեվիթ գյուղը բաժանված է երեք թաղի և, ըստ «Մեծովյան հանրագիտարանային բառարանի», ունի 200 տուն³¹: Այնտեղ իրենց ամառային հանգիստն են անցկացնում Քյուշուվե (Քուշիվա), Մոլլավեյիս (Մոլեվից), Զիլ քալե, Չաթ (Տափ), Շենքոյ գյուղերի բնակիչները, ինչպես նաև՝ նախկին Էլեվիթցիները: Ժամանակի ընթացքում հին քարե հիմքերի վրա՝ փայտաշեն տների կողքին, կառուցվել են ժամանակակից տներ: Ամռանն, այնտեղ ապրող բնակչության հետ Ստամբուլից, Բզմիրից և Անկարայից եկող համշենցիների թիվը հասնում է մինչև 500-ի: Հատկապես օգոստոսի սկզբին՝ Վարդավառի օրերին, բնակչության թիվը երբեմն հասնում է մինչև 1000-1500-ի, և Էլեվիթը համարվում է Չամլիհեմշինի ամենց բազմամարդ գյուղը: Մինչդեռ ձմռանը, շատ տեղումների պատճառով, բնակավայրը

քաղաքականության հետևանքները (Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. IV, Ե., 2006, էջ 215):

²⁸ Նույն տեղում, էջ 215-216:

²⁹ Քա-Համշենի բարբառում ձայնարկություն, դիմելաձև՝ կնոջը:

³⁰ Öztürk Ö., նշվ. աշխ., հ. 1, էջ 351-352:

³¹ Նույն տեղում:

գրեթե դատարկվում է: Անցյալում ևս առատ ձյան տեղումներն ու ձնհալները մեծ անհանգստություն են պատճառել եղնովիտցիներին: Կարապետ երեցի ձեռագրից շատ արժեքավոր մի տեղեկություն է հրապարակել Հ. Տաշյանը: Գրիչը պատմում է, որ Համշենի լեռները ձմռանը ձնառատ են եղել, և 1500 թ. Եղնովիտը ձնահյուսների հետևանքով մեծ վնասներ է կրել. «Աստուածասաստ բարկություն տեղ(ե)աց ի վերայ գեղջիս մերոյ Եղնովտա, գաւառիս Ս. Խաչիկ հաւրն մերոյ, զի եկն Ջվկայձորն հուսի եւ աւար եհար գեկեղեցին Ս. Միոն ժամատնովն, եւ զՌստագենց կալն սարպովն և մարագովն եւ զհացն եւ զոնակն ամենայն ցիր եւ ցան արար»: Նույն հաղորդումից տեղեկանում ենք, որ մեծապես տուժել են Պատրիկ թավաքալու և հոռոմ Ստեփանոսի ընտանիքները³²: Հետաքրքրական է, որ Ռիզեի համշենցիների առօրյա թուրքերենում այսօր էլ գործածական են մարագ և սարբին/սարբեն (մթերքի պահեստ) բառերը:

Եղնովիտ բնակավայրին շատ մոտ երևում է տակնուվրա արված, ամեն ինչ վերացրած հայկական գերեզմանոցի տեղը: Այստեղ էլ ոսկի փնտրելու նպատակով քանդել են բոլոր գերեզմանները: Թեև գյուղացիների մի մասն իրեն համարում է թուրքական ցեղերից սերված համշենցի, բայց չի ժխտում, որ այնտեղ նախկնում հայեր են ապրել: Իսկ «Քարթալ» փոքրիկ հյուրատան տիրուհի Հալիդե Յըլդըրդմը պատմում էր, որ իր մայրը հիշում էր, որ մորեղբայրները հայեր են եղել, և այդ ժամանակ՝ երեք սերունդ առաջ, այնտեղ մոտավորապես 50-60 տուն հայ և 5-6 տուն թուրք բնակիչ է ապրել: Մորից լսել է նաև, որ հայերը հավատարիմ էին իրենց կրոնական ծեսերին, չէին հաշտվում թուրքերի պարտադրած օրենքներին, դիմադրում էին և կառչած էին իրենց կրոնական սովորություններին: Այդ պատճառով էլ մի օր թուրք զինվորները նրանց քշում են գետից այն կողմ՝ դեպի լեռները, որտեղ էլ նրանցից շատերը զոհվում են: Թե որ թվականներին է վերաբերում տիկնոջ պատմածը, չկարողացանք պարզել: Սակայն, մոտավոր հաշվումներով, այն պետք է տեղի ունեցած լիներ XIX դ. վերջին կամ XX դ. սկզբին, այսինքն՝ երեք սերունդ առաջ: Սրանք, հավանաբար, XX դ. սկզբի հայության այն վերջին բեկորներն են եղել, որոնց գոյության մասին հիշատակում է նաև «Սնծովյան հանրագիտարանային բառարանը»³³:

Եղնովիտ-Էլեվիթ տեղանվան ստուգաբանությունը: Հայկական աղբյուրներում Եղնովիտը հիշատակվում է նաև Եղնհովիտ, Եղնահովիտ, Եղիովիտ, Եղովիտ, Եվոդյուտ, Էլեհովիտ տարբերակներով: Եղֆովիտը բնիկ հայկական տեղանուն է:

Թուրք հեղինակ Ս. Արըջըն, որն իր գրքում հիմնականում զբաղվել է Համշենի մանրատեղանունների հայկական ծագումը մերժելու ապարդյուն գործով, անդրադառնում է նաև Եղնովիտին: Նրա հրապարակած տեղանվանական ցանկում այն արձանագրվել է Էլովիդ տարբերակով: Ս. Արըջըն այս դեպքում ընդունում է, որ

³² Տաշեան Թ., նշվ. աշխ., էջ 65:

³³ Öztürk O., նշվ. աշխ., հ. I, էջ 315:

տեղանվան երկրորդ բաղադրիչը՝ օվիդը, հայերեն է։ Ապա փորձում է բացատրել օվիդ բառի նշանակությունը՝ հենվելով հայերեն բառարանին. «Իհարկե, հայերեն բառարանում յայլան որպես «լեռնաթաս» է նշվում»³⁴։ Թե հայերեն որ բառարանից է թուրք հեղինակը օգտվել և վերցրել այս անհասկանալի բացատրությունը, նշված չէ։ Ապա անմիջապես հավելում է, որ օվիդը յայլա (արոտավայր) իմաստով միայն թուրքերն են օգտագործում։ Իսկ տեղանվան էլ արմատին ընդհանրապես չի անդրադարձել։

Հարկ ենք համարում նշել, որ Ա. Մուքիսայանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանում» որպես հոմանիշներ են տրված հարթավայր, սարահարթ, լեռնագոգ, գետահովիտ, հարթավայր³⁵ բառերը, և ինչպես ցույց են տալիս Համշենի մանրատեղանունները՝ Եղնօվիտ, Բալօվիտ, Ջրօվիտ, Թիրօվիտ, Ձեղօվիտ, Մեձօվիտ, Խաչօվիտ և այլն, մաքուր հայկական են և հայտնի են որպես արոտավայրերի անուններ։

Եղնօվիտ տեղանունը, մեր ստուգաբանության համաձայն, կազմվել է եղ+ն- (եղնիկ, եղջերու) + հովիտ բաղադրիչներից, և նշանակում է եղնիկների հովիտ։ Եղն բառը բնիկ հայկական է, ըստ լեզվաբան Հ. Աճառյանի, հնդեվրոպական նախալեզվի *elno* ձևից է, և որից էլ՝ եղնուտը (եղնիկի ոտք), եղնորթը (եղնիկի ձագ)։ այն նոր գրական հայերենում է միայն գործածվել եղնիկ ձևով։ Տեղանվան մեջ կատարված էլն>եղն անցումը հնչյունափոխական մի երևույթ է, որը բնորոշ է հայերենին։ Հ. Աճառյանը նշում է նաև նույն *elno* հիմքից՝ «ռուսերենում елень, олень «եղջերու», еленица «եղնիկ», ... գերմ. Elen, ... ֆրանս. elan «հյուսիսային եղջերու» բառերի առկայության մասին»³⁶։ Եղնի-ն ածանցը Գ. Ջահուկյանը համարում է հնագույն, և հայերենում այս ածանցով կազմվել են միայն գոյականներ, այն հանդես է գալիս որպես հոլովման հիմքի ձևական ցուցիչ, ինչպես՝ եղն, եզն, երկն, ողն, անձն և այլն³⁷։ Հայկական աղբյուրներում հիշվում է տեղանվան գրաբարյան ձևը՝ Եղնահովիտ, Եղնովիտ, Եղիովիտ (երբեմն երկրորդ բառի բառասկզբի հ-ի անկումով), որը նույնպես հայերենին բնորոշ երևույթ է։ Մեր կարծիքով՝ համշենցիներն իրենց բարբառում պահպանել են տեղանվան հնագույն, վաղնջական ձևը՝ էլեվիտ>Էլեվիթ։

Տեղանվան երկրորդ բաղադրիչը՝ հովիտը, որը բնիկ հայկական հով արմատից է կազմվել, նշանակում է «ձոր», «ցածր բլրակ», ունի նաև ովիտ տարբերակը և «երկու ձևով էլ մտնում է հայկական բազմաթիվ տեղանունների մեջ, ինչպես՝ Բալահովիտ,

³⁴ Arıcı S. Dambur Tarihi, Hemşin-Purim Etimolojik Sözlüğü, 1. Basım, İstanbul, 2008, s. 269.

³⁵ Մուքիսայան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Ե., 2003, էջ 655:

³⁶ ՀԱԲ, հ. II, Ե., 1973, էջ 21 -22:

³⁷ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային շրջան, Ե., 1987, էջ 238:

Կոգովիտ, Աղիովիտ և այլն³⁸: Լեզվական արագաբանության և ձայնավորների ներդաշնակության հետևանքով, Էլեվիտ տեղանվան առաջին բաղադրիչի էլ-ի ճնշմամբ, հովիտը վերածվել է Էվիտի, որից էլ՝ Էլեվիտ>Էլեվիթ՝ բառավերջի տ>դ>թ հնչյունափոխությամբ: Հենց այս կերպ էլ տեղանունը գրանցվել է օսմանյան տարեգրքերում: Ըստ մեր հետազոտությունների՝ օսմանյան մատյաններում հանդիպող տեղանունները հիմնականում գրանցվել են տեղական բարբառային հնչարտասանական տարբերակով և օսմաներեն տառադարձմամբ:

Եղնովիտի բնակիչները նույնպես հետաքրքրված էին իրենց տեղանվան ստուգաբանությամբ: Նրանք հաստատեցին, որ դեռ այսօր էլ գյուղի դիմահայաց Սեր (Սար) կոչվող լեռան ստորոտին ամեն առավոտ՝ լուսադեմին, կարող ես հանդիպել եղնիկների, քարայծյամների, որոնք գալիս են մոտակա գետից ջուր խմելու: Նշենք նաև, որ Ղ. Բնձիճյանը ևս հիշատակել է, որ Էլեվիթի հարևանությամբ գտնվող Բալովիտը նույնպես հարուստ է եղել «... էրեւիք և գազանօք յորում գտանի վայրի այծ, որ աճէ մինչ ի չափ որթու. Յամին երիցս փոխէ զմորթ իւր, ի ձմերայնի ի սեաւ գոյն, ի գարնան ի կարմիր, և յաշնան ի սեաւ ...»³⁹:

Նշենք, որ Եղնովիտի ներկայիս բնակիչները հիշում են նաև շրջակա լեռների, հարևան արոտավայրերի, հանդերի, բլուրների հին անունները, ինչպես՝ Զովքու գյուղու (Zovku gölü) – գտնվում է Գարմի (Կարմիր) արոտավայրից վերև, կազմվել է ծովք և թրք. գյուլ-լիճ բառերից, Խաչիլեր (Xaçiler) – Խաչ+ի+լեռ, մարգագետնի անուն է, Խաչելենիգին դուզու (Xaçelenigin düzü) – մի հարթ տարածության անունն է, Հափիվանաքի արոտավայր – (Hapivanak yaylası) – կարծում ենք՝ Ափիվանք տեղանունն է՝ բառասկզբի հ-ի հավելումով, Հորդուկ-Խորդուկ (Horduk), Հոդուտ (Hoğut) – կազմվել է հոդ+օտ բաղադրիչներից, Մաթուրի արոտավայր – (Matur yaylası) – տեղանվան մեջ մատուռ բառն է, Նավքարի արոտավայր (Navkar yaylası) – կազմվել է բնիկ հայկական նավ+քար բառերից, Չարքենի (Çarkeñi), Քարգելող (Karge- loğ) – դաշտի անուն է՝ քար+գլուխ բառերից, Խորթաք գետ (Xor- tak) – Խոր+տակ բառերից, Քոցգուդուն դուզու (Kotsgudun düzü) –կոճղ+ուտ+ուն և դուզու՝ հարթավայր, բառերից:

Այսպիսով՝ բերված պատմալեզվական փաստերն անվիճելիորեն հաստատում են, որ Համշեն գավառի Եղնովիտ-Էլեվիթ բնակավայրը, հնագույն ժամանակներից լինելով հայոց հոգևոր և գրչության օջախներից ու հայտնի ուխտատեղիներից մեկը, իսլամաթուրքական միջավայրում մինչև XIX դ. վերջը կարողացել է պահպանել իր ազգային նկարագիրը: Իսկ քննության ենթարկված տեղանունները բուն հայկական են, հայարմատ, որոնք անցնելով դարերի բովով՝ կրել են տեղական խոսվածքի հնչարտասանական ազդեցությունը:

³⁸ ՀԱԲ, հ. III, Ե., 1977, էջ 554:

³⁹ Բնձիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 397:

ИСТОРИЯ АМШЕНСКОГО ПОСЕЛЕНИЯ
ЕГНОВИТ-ЭЛЕВИТ И ЭТИМОЛОГИЯ ДАННОГО ТОПОНИМА

СААКЯН Л. С.

Резюме

В XV-XVI вв. Егновит славился как один из центров армянской письменности, где был создан целый ряд ценных манускриптов. Население Егновита всячески противостояло в XVII-XVIII вв. насильственной исламизации уезда Амшен, благодаря чему он сохранил национальный облик вплоть до конца XIX века. Монастырь Егновита Хачекар до XX в. был излюбленным местом паломничества. Этимология топонима Егновит (*егн* (егник [олень, лань]) + *овит* [долина] явствует о его армянском происхождении, опровергая тем самым точку зрения турецкого автора С. Арыджы, усматривающего в топониме тюркские корни.